

ՀՀ Արմավիրի մարզի Այգեշատի գյուղապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետի (ծածկագիր 3.1-2) համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար

ՀՀ Արմավիրի մարզի Այգեշատի գյուղապետարանը (այսուհետ գյուղապետարան) հայտարարում է մրցույթ գյուղապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության առաջատար մասնագետի (ծածկագիր 3.1-2) թափուր պաշտոնը զբաղեցնելու համար.

Առաջատար մասնագետը աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ օրնքով սահմանված կարգով իրականացնում է աշխատակազմի փաստաթղթային շրջանառությունը և լրացնում համապատասխան փաստաթղթեր: Իրականացնում է քարտուղարի մոտ ընդունելության համար քաղաքացիների հերթագրումը: Քարտուղարի հանձնարարությամբ իրականացնում է համայնքի տարածքում գյուղատնտեսական մշակաբույսերի, հիվանդությունների, վնասատուների և մոլխոտի դեմ պայքարի աշխատանքներ: Աջակցում է համայնքում տոհմային և սերմնաբուծական աշխատանքներին, իրականացնում է ընդերքի, անտառային, ջրային և օդային տարածքների, ինչպես նաև բուսական ու կենդանական աշխարհի օգտագործման և պահպանության միջոցառումներ, պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

- Ունի առնվազն միջնակարգ կրթություն:
- Ունի սույն պաշտոնի անձնագրի 10-րդ կետի <<բ>> ենթակետում նշված իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն:

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար հայտարարված մրցույթը կկայանա 2013 թվականի հուլիսի 25-ին ժամը 1100 – ին , ՀՀ Արմավիրի մարզի Այգեշատի գյուղապետարանի շենքում.

Դիմող ՀՀ քաղաքացիները գյուղապետարանի աշխատակազմին պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.

- Դիմում մրցույթային հանձնաժողովի անունով (ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայաց-նելիս) դիպլոմի, աշխատանքային գրքույկի պատճենները բնօրինակի հետ միասին.

- Տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյուններից ներկայացվող պահանջների բավարարումը հաստատող փաստաթղթերի, պատճենների բնօրինակի հետ միասին,

- արական սեռի անձինք՝ զինգրքույկի կամ դրան փոխարինող վկայականի պատճեն, իսկականի հետ միասին.

- մեկ լուսանկար 3X 4 սմ չափսի

- անձնագրի պատճենը

- հայտարարություն այն մասին, որ նա չի տառապում 2005 թվականի մարտի 3-ի ՀՀ կառավարության N -310- Ն որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված հիվանդություններից մեկով:

ՀՀ քաղաքացիները մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը հանձնում են անձամբ՝ ներկայացնելով անձնագիրը:

Փաստաթղթերը ընդունվում են ամեն օր ժամը 1000 – ից 1600 –ը, բացի շաբաթ և կիրակի օրերից Այգեշատի գյուղապետարանում փողոց 3 N 9 շենք. հեռ. 71-7-51 և ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչություն (ք. Արմավիր փ. Աբովյան 71, հեռ. 0237 -6-07-70, 0237-6-76-49)

Մրցույթին մասնակցել ցանկացող ՀՀ քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև պաշտոնի անձնագրերին և հարցաշարերին ծանոթանալու համար կարող են դիմել Այգեշատի գյուղապետարան:

Դիմումների ընդունման վերջնաժամկետն է 2013 թվականի հուլիսի 10-ը: